600.0100.23.03.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

23 մարտի 2018 թվականի №100Լ
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի №438Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի փաստաթղթաշրջանառության կարգը հաստատելու մասին» №438Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի փաստաթղթաշրջանառության կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

   1) Կարգի 4-րդ կետում «ստացված փաստաթղթերի» բառերից հետո լրացնել «և հանրագրերի» բառերը.

   2) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1, 7.1 և 8.1 կետերով. «4.1 Mulberry համակարգով ստացված փաստաթղթերի գրանցամատյանում նշվում են փաստաթղթի ստացման ամսաթիվը, փաստաթղթի համարը և ուղարկողի անվանումը, իսկ հանրագրերի գրանցամատյանում նշվում են հանրագիրը ներկայացնելու ամսաթիվը, հանրագիր ներկայացնող անձի անունը, կոլեկտիվ հանրագրի դեպքում՝ որպես պատասխանատու նշված անձի անունը:»:

«7.1 Կոլեկտիվ հանրագիր ստանալու պարագայում, երբ կոլեկտիվ հանրագրի բոլոր մասնակիցները ներկայացրել են այն հրապարակելու վերաբերյալ իրենց համաձայնությունը, Ստորաբաժանումն այն մուտքագրելուց հետո՝ մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10⁰⁰–ն այդ մասին տեղեկացնում է Աշխատակազմի ղեկավարին, ում հանձնարարությամբ պատասխանատու աշխատակիցը մեկ աշխատանքային օրվա ընթացքում կոլեկտիվ հանրագիրը հրապարակում է հանձնաժողովի պաշտոնական կայքում:»:

«8.1 Հանրագիրը չի մուտքագրվում (գրանցվում), եթե անանուն է, ինչպես նաև դրանում նշված չէ հետադարձ կապի վերաբերյալ որևէ տեղեկություն:»:

3) Կարգի 8-րդ կետում «Հանձնաժողովին ուղղված փաստաթուղթը» բառերից հետո լրացնել «,բացառությամբ հանրագրի,» բառերը, իսկ «անստորագիր է,» բառից առաջ՝ «անանուն է» բառը.

4) Ուժը կորցրած ճանաչել Կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
КОМИССИЯ ПО РЕГУЛИРОВАНИЮ ОБЩЕСТВЕННЫХ УСЛУГ
PUBLIC SERVICES REGULATORY COMMISSION OF THE RA
02531594

ք. Երևան
23 մարտի 2018թ.